

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռ.:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մեջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարությունների համար վճարում են  
իւրաքանչիւր բարին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒՆՎԱՐԻՆ

# ՄՇԱԿ

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն զիբրով և նոյն պրոպրիետարի Մենք ստանում ենք սեփական շեֆ-ՐԵԴԱԿՏՈՐՆԵՐԻ:  
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:  
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բազմաբնույթ փողոցների անկյունում, Թամանյեկի տանը):  
Կայտարարությունները քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պետք է դիմել հետևյալ հասցեով: ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

### ՌՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Պետք է քննադատել և ոչ թե ընդհանրացնել. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մեր մեջ չը կայ դիտարկում. Սիբիրի Տոմսկի քաղաքի համալսարանը, Նամակ Օղեալից, Նամակ Երևանից, Նամակ Նոր-Ջուղայից, Ներքին Լուրեր. — ԱՍՏՈՒՄԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Կանանց առևտրական իրաւունքները Ֆրանսիայում, Փարս-Ասիայի երկաթուղիները, Արաբիան Լուրեր. — ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՊԵՏՐ Է ՔՆՆԱԳՐԱՅԵԼ ԵՒ ՈՉ ԹԵ ԸՆԴՀԱՆՆԵՐԱՅՆԵԼ

Չենք հասկանում ինչ է դարձանում տեղական «Новое Обозрение» լրագրի իր 4 յունվարի համարում, որ մենք անցեալ տարվայ մեր վերջին համարներից մինում, այն է «Մշակի» 148-որդ համարում, գեղատեսիլ մի յոգուած «Ամեն ազգի մեջ կան վատ մարդիկ» վերնագրով:

Մենք այդ տեսակ յոգուածը գրելով ամենին չը շեղվեցանք մեր մշտական ծրագրից, մեր նախկին ուղղութիւնից: Մենք մեր ասածները հիմնում ենք այն սկզբունքի վրա, որ միշտ պաշտպանել ենք, այսինքն՝ որ պետք է միշտ քննադատել պակասութիւնները, բայց երբէք չը պետք է ընդհանրացնել այդ պակասութիւնները:

Եթէ վրաց թատրոնը ճշմարիտ, անաչառ և նոյն իսկ անոգրով կերպով քննադատէր թէ հայի և թէ վրացու պակասութիւնները, — նա մեծ ծառայութիւն մատուցած կը լինէր երկու հարեան ազգերին էլ, և մենք շատ շնորհակալ պիտի լինէինք վրաց դրամատուրգներին այդ տեսակ օգտաւետ և բեղմնաւոր գործունէութեան համար: Բայց վրաց բեմը այդ չէ անում, այլ իր գրեթէ բոլոր ինքնուրոյն պիէսաներում, որոնք զիբ են խաղում թէ վրացիք և թէ հայեր՝ առաջիններին միշտ օրինակելի բարբ ու վարբի տէր է ցոյց տալիս, իսկ երկրորդներին միշտ ապականած: Այդ տեսակ վերաբերութիւն դէպի հասարակական կեանքը անաչառ քննադատութիւն չէ կարող անուանվել, այլ ջանալ մէկի կողմը մաքուր, անմեղ, ազնիւ ցոյց տալ, իսկ միւս կողմի տիպերին վերագրել բոլոր հակառակ յատկութիւնները, — դա նշանակում է ընդհանրացնել բոլոր հայերի վերաբերմամբ մի քանիսների մէջ եղած խոշոր պակասութիւնները:

Մենք երբէք ընդդէմ չենք եղել Սունդուկեանցի պիէսաների ուղղութեանը, քանի որ մենք ինքներս «Մշակի» մէջ միշտ հետեւել ենք նոյն ուղղութեան: Խստութեամբ քննադատել, անոգրով կերպով մրտաբանել, մերկացնել հայի պակասութիւնները: Բայց ուրիշ բան է քննադատել, մերկացնել մտարկել պակասութիւնները

և բոլորովն ուրիշ բան է յայտնի անձերին, նոյն իսկ գուցէ յայտնի դասակարգին յատուկ պակասութիւնները այն աստիճան ընդհանրացնել, որ այդ պակասութիւնները վերաբերվեն ամբողջ հասարակութեանը, ամբողջ ազգին:

Չարմատալի է որ այն սկզբունքը թէ պետք է քննադատել և ոչ թէ ընդհանրացնել, — շատ քիչերն են ըմբռնում մինչև այժմ:  
Անցեալ տարվայ «Մշակի» վերջին 149-որդ համարի առաջնորդում մենք պատմեցինք թէ «Մշակի» սկզբունքը բեր մեր խմբագրական ժողովներում մասնակցում էին մեզանից առաջ անուն ստացած մեր միակ գրական ոչ ժբերը, մեծ մասամբ կուռնիկ՝ ամազրի տիրացուական դպրոցի միացորդները և նմանապէս ամենաբարձր մասը մեր համալսարանականներից՝ ինչ անընդհատ ընդհարումներ ունէինք մենք նրանց հետ մեր խմբագրական ժողովներում այս կամ այն գաղափարի վերաբերմամբ: Այդ մշտական ընդհարումների շարժառիթները մէկ էր, ի միջի այլոց, և այն ուղղութիւնը, որին պետք է հետեւէր և որին հետեւեց «Մշակը» իր գոյութեան ընթացքում: Խստութեամբ քննադատել հայի պակասութիւնները, անխնայ մտաւոր կէ և անոգրով կերպով մերկացնել այդ պակասութիւնները՝ «Մշակի» ուղղութեան, պրոպրիետարի էական մասն էր կազմում: Այդ քննադատական, անձնաքննական, մրտաբանող ուղղութեան հետ երբէք չը կարողացան հաշտվել մեզանից առաջ եղած «պատրաստ» գրական ոչ ժբերը: Եթէ անհրաժեշտ գործընկեր և թէ համալսարանականները, իրանց նեղհայեաց ուղղով կատարելապէս անընդունակ հանդիսացան ըմբռնել այն մեծ գանազանութիւնը, որ կայ մի ազգի պակասութիւնների թէ և անխնայ քննադատութիւններին թէ և նոյն պակասութիւնների ամբողջ ազգի վերաբերմամբ ընդհանրացնելու մէջ:

Այդ խնդրի, ինչպէս և բոլոր միւս խնդիրների վերաբերմամբ մեր և մեր երդուեալ գրողների (և նմանապէս այն ժամանակի համալսարանականների) մէջ մի խոր և անանցելի վիճ զոյցացաւ:

Քննադատել մեր պակասութիւնները նշանակում է մերկացնել մեր վատ կողմերը օտարների առաջ: Խոհմտութիւնը պահանջում է լուրջ այդ պակասութիւնների մասին, եթէ ճշմարիտ էլ ունենայինք այդ տեսակ պակասութիւններ: Ահա այն նեղ տեսակէտը, որով նայում էին այն դրագէտները, որոնք պետք է աջակցէին մեզ մեր լրագրական գործունէութեան մէջ:

Ինչպէս երևում է եօթնամասնական թւականներից մինչև այժմ դեռ շատ աննշան առաջդիմութիւն արւա այն համոզմունքը թէ պետք է քննադատել մի հասարակութեան, մի ազգի պակասութիւնները,

բայց երբէք չը պետք է ամբողջ ազգի վերաբերմամբ ընդհանրացնել այդ նոյն պակասութիւնները:

Ինչպէս եօթնամասնական թւականներում այդ տեսակ պարզ ճշմարտութիւն անկարող եղան հասկանալ մեր նեղհայեաց տիրացուների և համալսարանականների «ամենալաւ», ամենաբարձր գրական պատրաստ ոչ ժբեր», այնպէս էլ այժմ այդ նոյն ճշմարտութիւնը, ինչպէս երևում է, չէ հասկանում և տեղական ուսու լրագրի յարգելի աշխատակիցը:

Եւ ճշմարիտ, եթէ նա հասկանար մեր միտքը, մեր նպատակը, մեր պրոպրիետար, մեր դաւանած սկզբունքը, — նա կը հասկանար նմանապէս թէ ինչ նպատակով էր գրած «Մշակի» 148-որդ համարի առաջնորդը: Նա այն պատճառով էր գրված, որ վրաց ինքնուրոյն ընկերությունը ոչ թէ իրան նպատակ է գրել հաւասարակէս քննադատել թէ հայի և թէ վրացու խոշոր պակասութիւնները, այլ միշտ ջանում է բեմի վրա մարդկային լաւ տիպը պատկերացնել վրացու մէջ, իսկ վատ տիպը բեր հայի մէջ: Այդ տեսակ ձգտում պարզ ցոյց է տալիս ոչ թէ մեր բոլոր թէ հայի և թէ վրացու պակասութիւնները անաչառ, անկեղծ կերպով քննադատելու ցանկութիւնը, մեր երկուսի թէ լաւ և թէ վատ կողմերը հանդէս հանելով: — Այլ միմիայն մէկ կողմի վերաբերմամբ բոլոր պակասութիւնները ընդհանրացնելու զիտաւորութիւնը:

Իսկ թէ իրանք արդարամիտ, խելացի և բարեմիտ վրացիք, ինչպէս խոստովանում է «Нов. Обозрѣн.» լրագրի վրացի աշխատակիցը, իրանց մայրենի թատրոնական ընկերությունը կոպեկի արժողութիւն չեն տալիս և վաղուց է արդէն «լաւ արժանւոյն» գնահատեցին, ինչպէս ինքն յոգուածագիրն ասում է, «Եկեպարի գրուածներին նմանվել միտք ունեցող այդ ամենալիմար Ֆարսերը», — այդ մենք ամենին չը զիտեինք, և շատ ուրախ ենք եթէ մեր յոգուածը, որին վրացի յոգուածագիրը կատարելապէս «պարզրիւն» էր համարում, գոնէ այն օգուան ունեցան, որ առաջ բերեց նրա կողմից վերոյիշեալ խոստովանութիւնը տեղական ուսու լրագրի էջերում: Այդ տեսակ խոստովանութիւն, որը, որքան մեղ յայտնի է, առաջին անգամն է արտասայտվում մի վրացի գրագէտի բերանից և երևում է որ և է տեղական լրագրում, մեղ համար շատ նշանաւոր է:

Հիմա մենք տեղեկացանք ուսու լրագրի վրացի յոգուածագրից, որ վրաց ընկերությունը կէսը բաղկացած է հայերէնից թատրոնական պիէսաներից, իսկ վրաց ինքնուրոյն պիէսաների մեծ մասը ուրիշ բան չեն, եթէ ոչ «ամենայնմար Ֆարսերը, որոնք միտք ունեն նմանվել Եկեպարի դրամաներին», կամ երևիայական տեղեկագործութիւններ են, որոնց ինքն վրաց հասարակութիւնը ըստ արժանւոյն գնահատել է և որոնց մասին խօսելը չափից գուրս մեծ պատիւ կը լինէր այդ տեսակ գրուածների համար:

Մենք հաւատում ենք, ի հարկէ, որ վրացի գրողը քաջ տեղեկ է վրաց բեմի այժմեան վիճակին և այդ պատճառով մենք էլ մեր կողմից խոստանում ենք նրան այլ ևս ոչինչ կարևորութիւն չը տալ այժմեան վրաց բեմի գոյութեանը:

### ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՄԵՃ ԶԸ ԿԱՑ ԴԻՍԻՊՈԼԻՏԱ  
«Ռուսաւարան» առանց դիտարկելու նոյնն է, ինչ որ ջրագրող առանց ջրի, ասում է պաճօնական երևելի մանկավարժ Կոմենսկի: Այդ մի

և նոյնը կարելի է ասել և ամեն մի հասարակական էրմոսկոլովեան, ամեն մի ընդհանրական գործի վերաբերութեամբ: Ուր կայ ընդհանրական գործ, այնտեղ պետք է թաղաւորէ և ամենախիստ դիտարկելու, ապա թէ ոչ այդ գործը անշուր ջրագրի կը նմանի: Այդ այդպէս ենք հասկանում և մենք՝ հայերս Ուշագրութեան առէք մեր ուսումնարաններում պատահած անկարգութիւնները, քննեցէք մեր գանազան տեսակ ընկերութիւնների գործունէութիւնը, աչքի առէք մեր հասարակական գործերի գրութիւնը, վերջապէս քննական աչքերով նայեցէք առհասարակ մեր ընդհանրական գործունէութեան ընթացքի վրա, — և մեր հարցի պատասխանը ձեզ յայտնի կը լինի:

Այնպէս որ ամեն ինչ պատասխանատուութեան բաղադրանքներն, ամեն տեղ ետականութիւն և վառամտութիւն, ամեն տեղ առաջինը լինելու ցանկութիւն... Այս յատկութիւններով ենք մենք զննարկելու մեր ամեն հասարակական գործերում, իսկ դիտարկելու նա սոսա՞ թանք, որ գործին կանոնաւոր ընթացք, ուղղութիւն և հետևապէս աշխուրթիւն տուող է, բացակայ է մեզանում: Ենթարկվել արդէն գոյութիւն ունեցող և անհրաժեշտ համարված օրէնքներին, ճանաչել իր պատշաճաւոր տեղը, հասկանալ և յարգել ինչ իրանից մեծի և թէ իրանից ցածի իրաւունքները, իր անկլբը թողած ուրիշ գործերի մէջ չը խառնվել և չը խանգարել արդէն միանգամ գործին տուած ուղղութիւնը, — ոչ, ինչ էք ասում, այդ ինչպէս կարելի է... Այդ նշանակում է ստիպանալ, անձնական ազատութիւնը գործին... ճաճան ֆրագներ, որոնք նոյնքան անմիտ են, որքան նրանց կրկնողները տհաս: Դիտարկելու ենթարկվել մենք ստիպանալ ենք համարում... Ոչինչ չանել, բայց շատ բոլոր, ուրիշը արած իրան ստիպանալու ոչ մի օրէնքի, ոչ մի հեղինակութեան չենթարկվել, կարգ ու կանոն չը ճանաչել ոչ որի իրաւունքը չը յարգել և անել ինչ որ քէֆը տալիս է, — այդ մենք ազատութիւն ենք համարում, ազատութիւն, որը ստանձարձակութիւն, կամայականութիւն խօսքերով աւելի ճշգրէն կարելի է արտայայտել և որը իսկապէս ստիպանական արգասիք է, որովհետեւ խելացի ազատութիւնը ինչ գիտակցական դիտարկելուց և անհրաժեշտ կարգ ու կանոններին ենթարկվելու մէջ է կայանում:

«Միայն ստիպանալ են ի չար գործ գնում ազատութիւնը, ասում է Բուսոս: Մենք ևս ազատութեան հետ վարվել չը դիտարկ, մենք էլ ներքին ի չարն ենք գործ գնում: Պատճառները նոյնն են: Մենք պատճաճանաչ չու ենք, երբ մեր գլխին կանգնած է վարբ, երբ մեր առաջ բացվում է մի ասպարէզ, որ մենք ազատ ենք լինում մեր գործողութիւնների մէջ, այնտեղ երևան ենք հանում մեր ասանձարձակ հոգին, իր բոլոր տեղը արտայայտութիւններով, որով պարզ ցոյց ենք տալիս, որ մենք սովոր չենք ազատութեան, որ մենք անընդունակ ենք ազատ գործունէութեան: — Մի ցաւալի, բայց անուրանալի ճշմարտութիւն...»

Ք. Թաղեանց

### ՄԻՐԻՆ ՏՈՄՍԿ ԳՐԱԳՐԱՅԵԼ ՀԱՍՏԱՆՈՒՄԸ

Միբիրի Տոմսկ քաղաքի համալսարանի դոյութեան առաջին տարին լրացել է ա՛ա այս 1890 թւին:

Պետերբուրգի ուսու լրագրներից քաղում ենք հետևեալ տեղեկութիւններ ինչեւ համալսարանի վիճակի մասին: Համալսարանն ունի ընդամենը 8 պրոֆէսորներ և 7 դոցէնտներ, ուսանողներ թիւը 195 էր այս տարին, որոնցից 67% կադմուս են եւրոպական Ռուսաստանի նահանգներից եկած երիտասարդներ, մեծ մասամբ հոգեւոր սե-

մինարհանքում ուսում աւարտածները, քանի որ Տոմսի համալսարանը միակ համալսարանն է Ռուսաստանում, որտեղ ընդունվում են և հոգեւոր դպրոցներում ուսում աւարտածները: Ռուսաստանի մէջ կան բազմաթիւ չբաւարժներ, բայց Տոմսի համալսարանը ներթափանց օգնում է իր շրջանում 31.000 բուլի գումարը, որով պիտի կատարվի 48 սենեակներից բաղկացած մի շքեղ և ամեն յարմարութիւն ունեցող շինութիւն ուսանողներին կեցութեան համար: Անդադար կոնցրետներ և պարանոցներ են տրվում Տոմսկում՝ յօգուտ ուսանողներին: Եւ այդ տեսակ խոչոր նուէրներ ամուս է մի քաղաք, որի բնակիչները թիւը հասել է 40 հազարի է հասնում: Համալսարանի գրադարանը բաղկացած է արդէն 96.000 հատոր գրքերից:

### ՆԱՄԱԿ ՕՒԻՍԱՑԻՑ

Գեկտեմբերի 15-ին

Անցեալները Օգէստյում քաղաքապետի թոյլտուութեամբ տեղի ունեցաւ «Գարմօնի» զահլի-ծում մի ներկայացում հայերէն լեզուով յօգուտ տեղիս ծխական հայոց դպրոցի:

Հայ հասարակութիւնը, պէտք է խոստովանել, առաւել քան ինչ որ մեր քաղաքում կայանում է կայացմանը:

Պիէտան մի թիւնն էր «Անանու կատակ», որովհետեւ սիրողները ուրիշ բարձր էր աւելի դժուար պիէտա ընտրելու Անկապած, անտիգի կը լինի, եթէ մենք սկսեմք քննել սիրողները խաղը, սրա կամ նրա արժանատւութիւնը, իբրև դերասանի. բայց չենք կարող չանել, որ այդ. Շեխանց, Բաբեանց, օրիորդ Լազարեան և մանաւանդ պ. Բուլազեան իբրև սիրողներ տանել էին բնու վրա: Դրողները վրա թաւարական մասը վատ տպագրութիւն չը թողցի:

Ծրարքի երկրորդ մասը պէտք է կարծելին հարմու էր երկու, որ յանձն էր աւել օր. Գորգանեան (Գարիալի), բայց որովհետեւ ներկայացման նախընթաց օրը ակարացել էր, ուստի հայոց երգերի փոխարին երգերին աուսերէն լեզուով նրա աշակերտուհիները: Հասարակութիւնը այսպիսով զրկվեց մայրենի լեզուով երգի լսելուց:

Սիրողներից երկուսը կարողացան ոտանաւորներ. մէկը կարողացաւ Պատկանանի «Յոյս» ստանաւորը, որը ընդունվեց բուն ծափահարութեամբ, իսկ միւսը կարողացաւ իր ինքնուրոյն զբոլակ մի օտանաւոր, որը նմանապէս շատ հաճելի եղաւ հասարակութեանը:

Ներկայացումից յետոյ, ժամը 11-ից ջիւ անց, ակաւին պարահանդէսը, որը անցաւ ամենաջոզ կերպով և վերջապէս առաւօտեան ժամը 4-ին միայն կարելի է երևակայել թէ ինչ աշխատով էին պարում քննույ ռուսները ձիւնափայլ ձեռնոցներով, մանրիկ մանրիկ կոշիկներով, պսպր-զուն կոճակներով: Պարից յետոյ շատերը ինֆլուէնցիա են ստացել:

Գնք կարող լուրջեամբ անցնել և չը յիշել մասնակցողներից մէկի՝ մի հայուհու աղքատուհնը, որը իր եւանդով կարող է օրինակելի համարվել այժմիկ: Նա ամիկին Անուշէն է, որ իր ծայտիկ գահիճի նախասենեակում քաղցրահամեղները և զովացուցիչ ըմպելիքները սեղան էր պատրաստել, որից ստացված արդիւնքը միանգամայն բարի նպատակով էր, նոյն տիկինը բոլոր մասնակցողներից աւելի նպատեց տոմսակցների ծայտիկուն և որը վերջապէս ներկայացման ամեն կողմից առաջ տանելու գործում միանգամայն պարագլուխ հանդիսացաւ:

Աւելորդ չենք համարում մի երկու խօսք տեւ այն ուսումնարանի մասին, որի օգտին ներկայացում արվեց: Տարիները ընթացում, մինչև 1889 թ. նա ու մի օգուտ չէ բերել տեղիս հասարակութեանը: Շատերը մտնելով այդ ուսումնարանը, աւարտել են իրանց ուսման ընթացքը, վկայական են ստացել, բայց անկարող են եղել խօսել մինչև անգամ մայրենի լեզուով: Գարտապարտութիւն էր թողնում նաև ուսումնարանի արտաքին տեսքը, որը աւելի կարելի էր նմանեցնել մի հաւաքուհի, քան ուսումնարանի: Գա երկու վտարիկ սենեակներից բաղկացած մի շինութիւն էր, որտեղ ամառվայ օթերը խեղդում էր աշակերտներին, իսկ հիւսիսային ցուրտ քամին ձմաւը ազատ կերպով ներս էր թափանցում:

Աշակերտների ընդունելութեան համար որոշ փամառակ չը կար, դա կարված էր վարչու-

թեան կամբեց: Մէկը ընդունվում էր սեպտեմբերի 10-ին, միւսը դեկտեմբերի վերջին, երրորդը նոր տարուց յետոյ, իսկ չորրորդը մայիսին և այլն, այնպէս, որ մի դասաբաժնում, որտեղ կային, օրինակ, 16 աշակերտ, անհրաժեշտ էր բաժանել, եթէ չափազանցութեան չը հասնեմք, գտն է մի 6-7 բաժանումներէ: Բայց անցեալ տարվանից հանգամանքները փոխվեցան՝ նոյն իսկ ուսումնարանի արտաքին տեսքը փոխաբեման ենթարկվեց: Բացի զրանից, վարչութիւնը ի ներկատի ունենալով ուսումնարանի և ներքին անկարգութիւնները, Թիֆլիսից մէկ վարժուհի հրաւիրեց, որը ինչպէս ասում են, հմտութեամբ առաջ է տանում իր ստանձնած պաշտօնը: Առ հասարակ ուսուցիչների և վարժուհու արժանաւորութեան, նրանց հմտութեան, դասաւանդութեան մասին մենք խոստանում ենք հաղորդել մանրամասնօրէն ուսումնական տարվայ վերջին, իսկ այժմ լրացայտ ենք, որ ուսուցիչները՝ վարժուհի օր. Լազարեանի հետ միասին, ձեռք ձեռքի տուած, գերմ սականութիւնից, համերաշխ կերպով առաջ կը տանեն դպրոցի գործը:

### ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Բունվարի 2-ին

«Մշակի» անցեալ տարվայ 145-որդ համարում տպագրված մեր լուրը առիթ է տուել մի պարտեմի նկատողութիւն անել, որը տպագրված է «Մշակի» 148 №-ում: Նկատողութիւն անող պարտեմը ասում է. «Մշակի» № 145-ի մէջ տպագրված լուրից երևում է, որ Զուշու թեմական դպրոցը դրամական օգնութիւն է խնդրում Հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղից: Ինչպէս պարտեմը չը հասկացաւ, որ այդ առաջարկութիւնը ոչ թէ թեմական դպրոցին է աւանդում, այլ մի մասնաւոր առաջարկութիւն է, որ մենք ենք արել: պարզ երևում է այդ Ուրեմն այդ լուրը պարզ ապացուցանում է, թէ հօրքան դարգացած է մեր «աղագիտի» շրջաններում մուրացկանութեան զաղափարը: խօսքերը՝ անտեղի են բողբոջվում: Բնույ պարտեմը բացակայում է, թէ զարմանալի չէ, ճշմարիտ, որ թեմական զուգրոցը, որն ունի 20.000 դեմսթրին հող բազմաթիւ գիւղերով, քանիցս աւելի գանազան արդիւնքների արդիւնքներ, ահային զրամազուխ, օգնութիւն է խնդրում Բարեգործական ընկերութեան մի աղքատիկ ճիւղից: «20.000 դեմսթրին հողը բազմաթիւ գիւղերով» 1/2 տարի է արդէն պատկանում է ոչ թէ թեմական դպրոցին, այլ հոգևոր իշխանութեան, և այդ կարևոր ներքից եկած բոլոր արդիւնքները այժմե ստանում է հողերը իշխանութիւնը: Այսպիսով եկաւ մուտանը կայանում են հետանալում միայն թուալագրամ, տպարան, սրբադաս, օւստատեղիները: հաստի, մոմավաճառութիւն, պատկազրամ, մետրիքականներից տուրք և կամաւոր ներկերներ: Ուրեմն դպրոցը ունի ոչ թէ «քսանից աւելի» դանազան արդիւնքների արդիւնքներ, այլ ու թ միայն, և ուրեմն համալսարան պահելն է չը յուրն ընկաւ... Դպրոցը՝ առանց «հասգին» անակալնի էլ՝ դրամազուխ չուրի: Հայոց Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղը, եթէ միայն կամենայ, ոչ թէ ամենաաղքատ տարեկը 1.000 ր. կարող է արդիւնք ունենալ, ինչպէս նկատողութիւն անող պարտեմ է ասում, այլ հնչեւորութեամբ կարող է իր տարեկան ընդգծէտը 1.500 բուլբու հասցնել: Ահա թէ ինչպէս ընկերութիւնը առանց դժուարութեան կարող է տարեկը 100 գործադիր անդամ ունենալ: միթէ 4.000 տուն հայ բնակիչ ունեցող Զուշին չէ կարող 100 անդամ աւալ: կարող է անշուշտ. միայն վարչութիւնը հող չէ տանում դրա համար, ուրիշ ոչինչ: Այդ է պատճառը, որ ճիւղը ունենում է տարեկան 40-50 անդամ 100 անդամ ունենալով, ընկերութիւնը կը ստանայ 500 ր. անդամական վճար. վարչութիւնը ճրագաւորաց երեկոցեան «տեղափոխ» ման գալով կարող է մօտաւորապէս 300 ր. հաւաքել (ինչպէս արին 88 թեմական), տասնը կարող է 2 ներկայացում և 2 մանկական երեկոց կայանալ, որոնցից ընկերութիւնը կը ստանայ ամենապակասը 400 ր. տարեկան, մի հարիւր բուլբու էլ նուէրներ են լինում, տարեկը գրագորտեմ ընթացում մուռք կը ստացվի մօտաւորապէս 200 ր: Ուրեմն ոչ թէ հարաքլե լովի, այլ հնչեւորութեամբ կարող են տարեկան ընդգծէտը 1.500 ր. հասցնել: Այդ 1.500 բուլբու-

լուց թող 400 ր. ծախսի ընկերութեան գրագորտեմ ընթացում համար, աղքատ ընտանիքներին՝ 200 ր., ուրիշ ծախսերի էլ 200 ր., իսկ մնացած 700 ր. էլ թող տան թեմական դպրոցին և այնտեղ պահեն այնքան չքաւոր աշակերտներ, որքան կարելի է, և ինչ պայմանով էլ ուզում է թող լինի: Ինչու հետո մայրաքաղաքներում ուսանողներին նպատա տալ, երբ իր գաղաքի և չըջալայելի չքաւորները կարօտ են ուսման... Չէ որ զրանով ընկերութիւնը երկու տեսակ օգուտ տուած կը լինէր. չքաւորներին՝ բարոյական, իսկ զպարանոցին՝ ներթափանց: Բայց երբ վարչութեան անդամները չեն գործում, փոխանակ 1.500 բուլբու, ունենում են տարեկան 500 բուլբու մուռք, - ուղ է մեղաւոր...

Ի վերջոյ պարտեմը առաջարկում է. «Եթէ դպրանոցի զեկավարները չեն կարողանում պահպանել այդ դպրոցը, այն ժամանակ աւելի լաւ կը լինի դրա եկամտները տան Բարեգործական ընկերութեան, որը աւելի բարեխղճաբար կը կարգադրէ նրանց: Ամբողջ Գարաբաղի համար չինված թեմական դպրանոցը, որը 30 տարի է, ինչ որ գոյութիւն ունի, փակել. և դպրոցի արդիւնքները առ Բարեգործական ընկերութեան: շատ գեղեցիկ առաջարկութիւն... Միթէ զուգրոցը չէ կարողանում պահպանել իր գոյութիւնը, որ պարտեմը այդպիսի առաջարկութիւն է անում: Գիշուք թէ զուգրոցը չէ էլ կարողանում պահպանել իր գոյութիւնը, միթէ կարելի է տասնեակ տարիներից ի վեր գոյութիւն ունեցող դպրոցը փակել, միթէ չը պէտք է աղբիւրներ, արդիւնքներ օրունել դպրոցի համար և աշխատել պահպանել դպրոցը: Կարող եմ գոյութիւն կունենայ անկասկած, և վերջոյնեալ առաջարկութեան պէս առաջարկութիւն չէ կարելի անել ամենին. այնպիսի առաջարկութիւն անողը ինքնամուռացութեան պէտք է հասած լինի անշուշտ...»

Ե. Վ.

### ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՍԱՑՆԵՑ

Բունվարի 2-ին

Թունվարի 1-ի գիշերը հասարակական մեծ խնջոց եղաւ հայոց դպրոցի դահլիճում: պարերը շարունակվեցան մինչև գիշերվայ ժամը 4-ը: միջոցում սկսվեց աւանդական մեծ «Գիտուն» պարը, որին մասնակցում էր հրաւիրածների ստուար մասը: Գիտունը իր վրա կրում է լսոր հետեման կիթը. զա միակն է մեր պարերից, որ ունի կանոններ և որոշ ձևեր, որոնց պէտք է սովորել և ընտելանալ: ապա թէ խաղալ: Լաւ կը լինէր որ, մեր թմբած զեղարուեստագիտները ուզ դարձնէին վերջապէս ժողովրդական պարերի և երգերի եղանակների ժողովրդական դասը: Այդ պարահանդէսից զուգրոցի զուտ օգուտ մնաց 50 բուլբու:

Գեկտեմբերի 20-ին գիշերը մի նորածին մանուկ էին տարել դերև տեղացի հարուստ Պարի ընկաւ. առաւօտը գտնում են երեխային այլանդակված ու մեռած: Բակի գամբիւնը կերել էին նրա տանը: Աւելորդ չենք համարում զրա վրա աւանդել, որ այս երկու ամսվ յ ընթացում 6 այգայիսի դէպք է պատահել. 4 երեխայ էլ դրել էին եկեղեցու ընկաւ: մի երեխայ էլ դրել էին բաղաւթի կից Փաշապետը եկեղեցու գամբիւն: Կրանք բոլոր ասորիների են համարվում և չամուսնացած աղջիկներից ծնված:

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան Նոր-Գայաշէտի ճիւղը ունի այս տարվայ համար 30 անդամ. տեղական ճիւղի վարչութիւնը շատ երանդով է գործում. միայն դպրոցի գանազան պէտքերի համար տուել է 80 ր: ճիւղը մտաբեր է իր օգտին մի խնջոց (պարահանդէս) տարբեր վարդանաց տունի օրը հայոց զուգրոցի դահլիճում:

Բոլոր նախապատրաստութիւնները տեսնված են և առաջիկայ գարնանը կը սկսվեն աշխատութիւնները Սեանի ընցի մի նոր առու հանելու ներևորից վերս գտնված անջրդի գիւղերին և գաւտերին ջուր մատակարարելու համար: զրա համար այս ամառ շարունակ հետազոտութիւններ կ'ան անում մի ջրաշարի և մի ինժեներ: Հին խնայերի հանած առուն, որ թափվում էր Զանգի պիտք է խափանվի. սրա մի հետեսնել էլ այն կը լինի, որ կը խանգարվի Սեանի վանքի մի ջրաղաղը. ուստի միաբանութեան առաջարկված է կամ ջրաղացի գիւղը ստանալ և կամ նորը շինել: նոր առուի վրա ու արվի վանքին:

Նոր-Գայաշէտի զրամատէր Նիկողոսեան Եւե-

նովկա աւանում, Սեանի լճի ափին, կառուցել է մի մեծ և կանոնաւոր շոգ է աղաց, որը եկող ապրիլից պիտի սկսի բանել. զրանով այս գաւառի ցորենի արդիւնքները թաւական զարկ կը ստանայ: Դողաղացում պիտի պատրաստվեն ամեն տեսակի ալիւրներ:

\*\*\*

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

ԹէլԱխից մեզ գրում են. «Գեկտեմբերի վերջին օրերում ժողովրդական ուսումնարանների դիրեկտորը օգնական պ. Գրէն, քաղաքային ուսումնարանի ուսուցիչներից մէկի հետ այցելեց տեղիս հայոց երկուս ուսումնարանները: Լսելով ուսուցիչներից Գրէնը ասելը և աչքի անցնելով աշակերտների ու աշակերտուհիների տեսարանները, պ. Գրէն յայտնեց որ այժմ տեսնում է մեր դպրոցներում որոշ սխտեմ և ուղղութիւն, որոնք անկասկած աջողութիւն են խոստանում դպրոցներին: Նա հետագա շատ գոհ ուսումնարանների դրութիւններից»:

Մեզ գրում են հետեւեալը. «Հարուստ Մկրտիչ Սանասարեան ուղարկել է մի գումար այն անդլիական մասնաժողովին, որը կազմվել է Լճուղուում հրատարակվող «Հայաստան» ֆրանսերէն-հայերէն լրագիրը հովանաւորելու համար: Այդ գումարը պէտք է բանիլը դրլի, իսկ գումարի տակոցը, մօտ 1500 բուլբու տարեկան, պէտք է գործադրվի վերոյիշեալ լրագրը պահպանելու համար»:

ԹէլԱխից մեզ գրում են. «Մի երկու շաբաթ սրանից առաջ 15 աղբերիկ մարդկանց ստորագրութեամբ խնդրեց ուղարկվեց հայոց Բարեգործական ընկերութեան Թիֆլիսի կենտրոնական խորհրդին՝ թոյլ տալու Թելաւում եւ ընկերութեան տեղական վարչութեան ճիւղը բանալու»:

Երեւանեաց մեզ գրում են, որ նոր տարի գիշերը երեանում վանական նախկին «Պատկ» լրագրի խմբագրի՝ Վասակ Պապայանեան, ներթափանց անախանքերը դրութեան մէջ:

Էջմիածնեաց մեզ հաղորդում են. «Այստեղ կազմած դպրոցական յանձնաժողովը դրողված է մի քանի խնդիրներով, զրանցից մէկն է «Է» և «Է» տառերի գործածութեան խնդրը: Նոյն տեղից հաղորդում են, որ պ. Ս. Մանգինեանցին առաջարկել են կազմել ամառային «ժանկավարժական կորսեր», այդ կորսերը, ինչպէս ասում են, պարտաւորական կերպով պէտք է յաճախեն երրորդ կարգին պատկանող, այսինքն թեմական դպրոցները աւարտող ուսուցիչները, որոնց թիւը հասնում է 200-ի և որոնք ոչինչ մանկավարժական կրթութիւն չեն ստացել: Կուրսերը կը շարունակվեն յուլիսի 1—20-ը: Նախկին ուսուցչական ժողովից մնացած փողեպի պիտի պահանջվեն այդ առիթով»:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երասխայի մէջ սկսել է մեծ քանակութեամբ ներմուծվել ուսուցանալու, եւ պատճառական կատակարարութիւնը մտադրվել է մի փոս-հիւպատան նշանակել Բաթումի մէջ:

Սանիտարական հարցերը վերաբերմամբ, քաղաքային վարչութեան անհոգութիւնը իր գաղաթնակէտին է հասել: Քանի անգամ մատնանիլ ենք արել կուր գետի աշակերտեան մասի վրա, Միջալեւան կամուրջից սկսած մինչև Վանքի պարիսպը և այնտեղ գտնվող ջրաղացի պատճառով ապականութեամբ լին, դանդաղ հօտը հոտած ջրի միասակարարութեան վրա, այժմ էլ տեսնում ենք որ կուրի այդ մասի պահպանութեամբ չազատված զոյնը զոյն սառուցը կօտորում և տանում են սառուցներում դիզելու, ամառ ժամանակ անշու անկուտ համար: Նոյն իսկ սանիտարական բժիշկը և քաղաքային վարչութեան անդամները ապահոված չեն ամառ ժամանակ մաքուր սառուցի տեղ ապականութիւններով լին այդ սառուցը գործածելու: Զարմանալի անտարբերութիւն. այդ էլ հօ ծախս չէ պահանջում. միթէ կարելի չէ կարգադրել այնպէս, որ սառուցների տեղերը, կուրի այս կամ այն մաքուր տեղերից մաքուր սառուց հանէին: Բաւական չէ միայն խանութպանների ետեից ընկնել, ստիպելով նրանց խանութները մաքուր և գեղեցիկ պահել, անհրաժեշտ է, հա-

սարակութեան առողջութիւնը ապահովելու համար մէկը անկողմ մը առը չը մտնանալ:

Յուն վարի 6-ին թիֆլիսի քրիստոնեայ եկեղեցիները կատարեցին ջրօրհնէքի հանդէսը, որը դարերով արդէն, որ կազմում է քրիստոնեայ հասարակութիւնների ամենամեծ տօններից մէկը և որը զեօթի սուր, որտեղ խաչը ջուրը պիտի գցվէր, խոնաված էր անսահման հազարներով ժողովուրդ: Ինչպէս տեսնելու տարին երթում, այս տարի էլ շատերը լողացան Կուրի սառը ջրի մէջ:

Հիւսիսային հեռավորական գործակալութիւնը, ինչպէս երևում է, այս տարի անկել առաջադիմութիւն է ուղում անել: Մինչև այժմ նա հազարում էր օրինակ, զետեղի սառնելու մեք հասարակութեան համար բոլորովին անկողող լուրեր, իսկ այժմ, չը բառականաբար զբաղում, ուղում է մատակարարել միջ այնպիսի լուրեր թէ «Չիգորի վերջացրեց իր շատ ժամատի խաղը, թէ նա այսօր տարաւ, իսկ նրա ընկերը այսօր» և այլ այլպիսի դատարկ լուրեր: Գործակալութեան այդ առաջադիմութիւնը անկասկած պէտք է շնորհաբար...:

Յուն վարի 4-ին, թիֆլիսի Ժողովարանի դահլիճում բարեգործական նպատակով տուած մասկական երկկողմը շատ աջող անցաւ: Երկկողմը մի առանձին կենդանութիւն ունէր: Մուտքը և ղեկ է մտաւորապէս 400 բուրլի, իսկ ծախսը մոտ 120 բուրլի: Երկկողմի նախածնունդներ, որ, որ յիմարեանները արժանի են շնորհակալութեան, իրանց գործ գործ վանքերի համար:

Մի հազարում են մի ուրախակի լուր ԲԱԳՈՒՅ: Այնտեղի կանանց մէջ միտք է յղացել բանալու իրական արհեստագիտական զբաղում: «Այդ միտքը՝ յղանալուն պէս, դուրս են մեղ Բագուրից, ունեցաւ բազմաթիւ համակողմներ, մի քանի ամսով ընթացեալ հաւաքել են մի պատկառելի զուտ, որը, ինչպէս առ այժմ խոսում են, պիտի մնայ դրամագրուի, բացվելի ուսումնաբանի համար արդէն ինչորէք է տուած կառավարութեան և սպասում են լծողութեան Անցել ասին նոյն զոբոցի օգտին կանանց նախածնունդների, կուրբի դահլիճում, արվեց մի երկկողմ, ընդամենը մուտքը կզած է 1364 Բ. 20 կոպէկ: Միտքը հասնում է մտաւորապէս 364 բուրլու: Կախարհը հանած՝ եկամտից մնում է զուտ արդիւնը 1000 Բ: Այդ բոլորի համար շնորհակալութեան արժանի են տ. տ. Ա. Մաքարեան, Ե. Բակասեան, Ս. Աղաբաբեան, և Ե. Կրասիլնիկեան, որոնք ոչինչ չէին ինչպէս այդ երկկողմի անցում թեան համար):

Վերաբերվին դէպի կին-վաճառականների շահերը՝ նրանց ունեցած դատական վէճերում ազամարդանց հետ Զղամարդիկ, նոյն իսկ այն պատճառով, որ կանայք հետզհետեւ իրանց ձեռք են գցում այլ և այլ ընդարձակ առևտրական գործեր, մրցման օյժից երկիւղ կրելով, միջոց կախարհի միակ կին-վաճառականների շահերին և առևտրական դատարանի պաշտօնականների ընտրութեան գործում կաշխատեն ընտրել այնպիսի անձինք, որոնք ընդդէմ են իրական սեւի առևտրական գործունէութեան, ուրեմն կնոջ և ազամարդու վէճերը քննելու ժամանակ միջոց կողմնպահ կը հանդիսանան, ամեն ջանք գործ դնելով պաշտպանել ազամարդկանց իրաւունքները:

Այդ է պատճառը, որ Ֆրանսիացի կին-առևտրականները խնդրեց ներկայացրին Ֆրանսիական պատգամաւորների ժողովին՝ քննել այդ հարցը և ժողովը անցնել տարի վճանց այդ հարցը կանանց օգտին:

Ապա, երբ անցել տարի, ամառ ժամանակ պատգամաւորների ժողովում արդէն վճուած այդ հարցը անցաւ սենատը և ենթարկվեց այդ բարձրագոյն ազգային ժողովի քննութեան, սենատը չը վաւերացրեց պատգամաւորների ժողովի վճուած և մերժեց առևտրով պարագող Ֆրանսուէրների՝ առևտրական դատարանների ընտրութիւններում մասնակցելու իրաւունքը:

Պարիզի ցուցահանդէսի ժամանակ կայացած կանանց կօնգրէսում, ինչպէս մենք յիշեցինք մեր Պարիզի նամակներում, կանայք միաձայն բողոքեցին սենատի այդ անարդար վճուի դէմ:

Այժմ պատգամաւորների ժողովը նորից ներկայացրեց սենատի քննութեանը նոյն օրինակները: Եւ, ինչպէս հազարում են Ֆրանսիական լրագրիչները, սենատը կարծիք յայտարարեց իր հարցը կարծիքը հակվում է կանանց իրաւունքի կողմը և հետզհետեւ բազմաթիւ են երկրի մէջ յիշեալ օրինակների վաւերացումը պահանջող հեղինակաւոր ձայներ:

Այժմ, ինչպէս հազարում է «Figaro» լրագրերը, սենատը չը զոհնալով ինքնաբերաբար, կամ հասարակաց կարծիքի ճնշման տակ որ և է զելուստ անել գեղեցիկ սեւերի պատկանող վաճառականների արարարքի պահանջներին, յանձնեց առևտրի միջոցը պ. Տիրաբիւրի այդ հարցի մասին նախագիծ կազմելը, նախապէս տեղեկանալով առևտրական բարձրագոյն դատարաններից, թէ ինչ է այդ դատարանների կարծիքը յուզող խնդրի մասին:

### ՓՈՒՔԻ ԱՍՒՆԱՅԻ ԵՐԿԱՌՈՒՂԻՆԵՐԸ

Գերմանական Վիլհելմ կայսրի Կ. Պոլսի գնատուց յետոյ, Փոքր-Ասիայում երկամուտու զծեր անցկացնելու հարցը անելի հաստատ հիմքերի վրա չը վեց:

Թուրքաց այժմեան պետութեան այդ մասում երկամուտու զծեր կառուցանելու իրաւունքը և զօրծը միանգամայն քերականներին ձեռքն է անցել, և զօրու գեղեցիկան է այն ընկերութիւնը, որը պէտք է երկամուտու զծ անցկացնէ Սիւլաուսից մինչև Անգլիա: Այդ գիծը անցկացնելու գլխաւոր պատրաստութիւնները տեսնված են, զլուստը կէտեղը որոշված են, և այժմ գերմանական աղեղեցութիւնը այնքան մեծ է թիւրքիայի վրա, որ Բերլինում և նոյն իսկ Պոլսում համոզված են թէ թուրքաց կառավարութիւնը անկարող կը լինի նոր խոշորոսներ յարուցանել, ինչպէս մինչև այժմ պատահել է:

Մտադրութիւն կայ, այդ գիծը վերջացնելուց յետոյ երկորդական զծեր անցկացնել դէպի Սս ծովի կղզիքը, և ապա դէպի երկիր խորքերը, զլիաւորապէս ու պի մտքով տակ ան նպատակներով:

Ի միջի այլոց սկզբունքով վճուած է մի գիծ էլ անցկացնել մինչև Երզրում, և նոյն իսկ մինչև Բաղդադ: Եւ այնպիսով նախ Կ. Պոլսու կայաված կը լինի Փոքր-Ասիայի և Հայաստանի կենտրոնների հետ, և երկրորդ այդ երկրները կենթարկվին գլխաւորապէս այն պետութիւններին աղեղեցութեանը, որոնք Կ. Պոլսում առաջնակարգ դեր կը կատարեն Հարկաւոր է միջակապնելը, որ երկամուտու զծեր անցկացնելու հետ՝ գերմանական կառավարութիւնը կպզում է և Փոքր-Ասիայում գերմանական կօլօնիստներ հաստատելու խնդիրը:

### ՄՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Եւրոպայից հեռագրում են, որ Անգլիան զօրքեր է ուղարկում Կիպրոս կղզու վրա:

— «Siècle» լրագիրը հերքում է այն լուրը, իրը թէ Ֆրանսիական միւնիստրութեան մէջ փոփոխութիւն պիտի կատարվի: Այս օրերս պիտի կայանայ միւնիստրների ժողով, որին ներկայ կը գտնվի Միցցայից վերադարձած Տիրար:

— Վիլհելմ կայսրը տեղեկութիւն պահանջեց Վիլհելմի ընդհանրացից՝ իշխան Բիսմարկի առողջութեան մասին:

— Ֆրանսիական գործարանատէրերի մի խումբը զիտաւորութիւն ունի կազմակերպել Ֆրանսիական արդիւնքների ցուցահանդէսներ 1891 թ. մինչև 1892 թ. մինչև Մոսկվայում:

— Ֆրանսիական լրագրիչները հերքում են նատարակ Կարնոյ հրահարութեան մասին տարածված լուրերը:

— Ժիւլ Ալմեն հրատարակել է մի յուշած պետութիւնների զինամտփոխութեան անհրաժեշտութեան մասին: Այդ յուշածը մեծ արժուէ է հանում և հեղինակը ստանում է բազմաթիւ համակրական նամակներ իր յայտնած մտքերի առիթով:

— Բիսմարկի առողջութիւնը լաւանում է: — Սպանիայի մասով թագաւորը զեռ հիւանդ է: Մարթիալուսին գրեթէ չէ հնարում հրահարի անկողնից: Սպանիայի սահմաններում նախազուգանող միջոցներ են ձեռք առնում կարիստների շարժման դէմ:

— Կապիլի համալսարանը զեկուցում է ներկայացրել աստղաբանական ազգային լուսաւորութեան միւնիստրութեան, ապացուցանելով Լիօվի համալսարանում ըմշկական բաժնի բանալու անհրաժեշտութիւնը:

— Եւրոպական լրագրիչները բազմաթիւ յուշածներ են նուրիլ թիւրքաց դատավարութեանը Մուսաբէլի դատի առիթով:

— Բէլգրադից հեռագրում են, որ Նատալիա թագուհին մտաղիբ է յիմու մի երկու պետութիւններին և ըողջել նրանց մօտ այն խստութիւնների դէմ, որ դրել է Միլանը նախկին թագուհու և իր որդու յարաբերութիւնների վրա: Մի քանի ժամանակ Լուրեր վկայեցին պրուտեալ, որ իբրև թէ Ֆրանց-Յովսիփ կայսրը մտաղիբ է դահից հրաժարվել: Այժմ Վիլհելմից հազարում են, որ այդ լուրերը անձինք են:

— Մադրիդից գրում են, որ Սպանիայի մասով թագաւորի առողջութիւնը ընդհանրապէս այսօրեան վատ է, որ դժուար թէ նա կարող լինի երկար ապրել: Այդ հանգամանքը մի առանձին օյժ է տալու հանրապետական շարժումներին Սպանիայի մէջ:

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս այրված բեղիկական թագաւորական Լիէն ամբողջ անուան հետ միացած են պատմական երկու նշանաւոր դէպքեր, այդ ամբողջն է, որ 1812 թ. մինչև Նապոլէոն I պատերազմ յայտնեց Ռուսաստանին, այդ ամբողջն է որ 1865 թ. մինչև վախճանվեց Լիւսիւր I բեղիկական թագաւորը:

\*

Լուսնի վրա նկատվող մութ բծերը, որպէս յայտնի է, ամենքի վրա միտենալ տպաւորութիւն չեն գործում: Ասիական արեւը համարեա բոլոր ազգերը լուսնի այդ բծերը նմանեցնում են փոքրիկ նապատակի պատկերին: Չինացիները, որոնք առանձին ուշադրութեամբ հետազոտել են այդ նապատակի պատկերը, մինչև անգամ դանդաղում են, որ նապատակը նստած է իր ետևի թաթերի վրա և բերնի ձեռքում սանդի մէջ: Միացիները, որոնք լուսնի այդ բծերը նապատակի պատկերով չեն երևում, ենթադրում են, որ դա շատ կարելի է բերնի ձեռքում նապատակ չէ, այլ մի տղամարդ է իր կնոջ հետ, որոնք աշխատում են բանարարացում: Հիսթօ-ամերիկական նոդկացիները հակամտ են տեսնել լուսնի վրա նապատակ կամ մի այլ խոշոր կենդանի կենտրոնական Ամերիկայի հին արձանների վրա լուսնի նկարված է կտի կամ խեցե-մարթի ձևով, որոնցից նապատակը դուրս է թռչում: Հետաքրքիր Ամերիկայում ընդհակառակն տեղական աղբաբանութիւնը մինչև այժմ էլ հաւատացած է, որ լուսնի վրա նկատվող բծերը մարդկանց պատկերներ են: Հին ինկաներին մինչև անգամ յայտնի էր, որ միանգամ մի ջահիլ ազնիկ սիրահարակց լուսնի վրա, թեան նրա մօտ և ընկաւ նրա գիրկը և այն ժամանակից լուսնը չէ բաց թողնում նրան: Իսկիմոսները առանձին հայացքներ ունեն լուսնի մասին, նրանք պատմում են, որ լուսնի մի անգամ վաղից իր հարազատ քրոջ՝ արեգակի ետեք՝ ուղեկատրով գրկել և համարել նրան: Սակայն արեգակը բաւական սառնութեամբ վերաբերվեց լուսնի

սիրաստութիւններին Տեօնիլով որ լուսնը հասնում է իրան, արեգակը շուտ եկաւ և մութ ըսեց լուսնի երեսին, որի հետքերը մինչև այժմ էլ մնացել են բծերի նման: Հին գերմանացիների հակացողութեամբ, լուսնը յախչտակել է երկու երկնայիններին, որոնք ջրով լի սպիտակ ուսին վերադառնում էին: Հօտանտոսների կարծիքով լուսնը զլիսացաւ ունի: Երբ զլիսացաւ զօրեղանում է, նա ձեռքը դնում է գլխի վրա և դրանով ծածկում է մեղանից իր պայծառ դէմքը: Իսկիմոսները ընդհակառակն կարծում են, որ լուսնը՝ երկնի վրա երեք շաբաթ՝ դրօսակուց յետոյ, պէտք է որ քաղցի, այդ պատճառով նա առանձնանում է իր սենեակում և լաւ կշտանում է, այնպէս որ յետոյ երկու շաբաթ շարունակ նկատելի կերպով չաղանում է:

### ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

#### ՀԻՒՍՒՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐՈՒԳ, 4 յունվարի Մոսկվայի դէմա-բալ-նահանգապետի անունով հրատարակած Բարձրագոյն հրովարտական ամսագր է: Որքոք ընկելով նոր տարվայ մէջ, աղպում են Ատուծուց, որ ապագայում էլ անընդհատ կերպով ամեն-բից ցանկացած և ամենքի համար փրկարար խաղաղութեան շրջանում՝ առաջ գնայ մի սիրելի հայրենիքի ներքին օյժերի դարագաման գործը:

ՄԱԳԻՒԿ, 4 յունվարի: Լիսաբոնից ստացված տեղեկութիւններին նայելով, Կոբլբորում այրել են անգլիական դրօշակը:

ՊԵՏԵՐՈՒԳ, 5 յունվարի Մոսկուի նահանգի աղեկանութիւնը ամենահպատակ ուղերձով ինչորում է՝ աղեկանութեանը իրաւունք տալ ընտրելու միջնակարգ դպրոցների համար հոգաբարձու և մասնագործող նշանակելու՝ այդ հիմնարկութիւնների գործիչներ ունեցող սխտեմը ընկելու համար թագաւոր կայսրը ուղերձը ընդնելուց յետոյ՝ բարեհաճեց հրամայել, յայտնել Սոսենսկի աղեկանութեանը, որ նա, այժմ էլ, գոյութիւն ունեցող կարգադրութիւնների դրու-թեամբ, կարող է հետեւի դպրոցական հիմնարկութիւնների ներքին կեանքին իր պատուար հոգաբարձուների միջոցով, և որ ժողովրդական լուսաւորութեան միւնիստրութիւնը զբաղված է զինամտփոխական կուրսը թեկնացնելու հարցով, այն չափով, ինչ չափով այդ կարելի կը լինի, առանց մշտնապէս հիմնաւոր կրթութեան գործին:— Պաշտօնավոր դէյուտիտներ ստասկի սովետնիկ Սիդորսկի նշանակված է Ս. Սինոզի ատագ-պրոկուրորի զիւստոտան վերատեսուչ:

ԼԻՍԱՅՈՒՆ, 5 յունվարի: Պորտուգալիան ցանկանում է Աֆրիկայի գործերի պատճառով Անգլիայի հետ ունեցած տարածալուսնիները վրձա-ել միջնորդ դատարանով:

ՎԻՆՆԱ, 5 յունվարի: Աւստրիայի և Ռուսի-այի դիպլոմատիական ներկայացուցիչները բողոք յայտնեցին այն բանի դէմ, որ Սօֆիայում մտա-ղրութիւն կայ հաստատելու 50% մաքսահարկ ներմուծվող ապրանքների համար:

ՎԻՆՆԱ, 5 յունվարի: Գերմանո-չեխական կօնֆերանցիան, վիճելի հարցերից ամենակարևորը՝ այն է լեղուներին հարցը՝ վճանց: Վճուած է, թոյլ տալ լեղուների գործածութիւնը՝ նայելով այս և այն տեղի պէտքերին:

ՊԵՏԵՐՈՒԳ, 6 յունվարի: Զօրքը շտապ կերպով և աջողութեամբ զինաւորելու նպատակով ամեն միջոցներ ձեռք առնելու համար՝ Բարձրագոյն հրամայված է հիմնել երկու ժամանակաւոր յանձնաժողովներ, այն է. զլիսաւոր կարգադրիչ յանձնաժողով, զինաւորական միւնիստրի նախագահութեամբ, և գործադրող յանձնաժողով, զենկաւալ-ֆելդշեյթմէյստերի օգնականի նախագահութեամբ: Գլխաւոր կարգադրիչ յանձնաժողովից է կախված թոյլ տալ զանազան միջոցների գործադրութիւնը թէ զօրքը զինաւորելու և թէ նը-շանակած փողերը ծախսելու վերաբերմամբ, դրա հետ միասին տրվում է նրան այդ մասին առանձին լրագրութիւն, գործադրող յանձնաժողովի պարտաւորութիւնն է անմիջապէս առաջ տանելու սպասարկութեան գործը:— Այսօր սովորական շուքով տեղի ունեցած ջրօրհնէքի հանդէսը, որին ներկայ էին թագաւոր կայսրը և թագուհի կայսրուհին: Հանդէսին ներկայ էին նոյնպէս և էլիթաւորական դուքսը և զբուսկին: Այսօր փակվեց տեղիական և արհեստագիտական կրթութեան ասպարիզի վրա գործողների ժողովը: Նախագահում էր ժողովրդական լուսաւորու-թեան միւնիստրը:

ՏՈՒՐԻՆ, 6 յունվարի Այս Երեկոյան Առտան զօրքը իրան աւելի վաս էր զգում:

ՀՈՍՄ, 6 յունվարի Այսը թագաւորը կողերովի Տօրին:

ՄԱԳՐԻԳ, 6 յունվարի թագուհի-ինամակալունն ար մինխարութեան կազմը յանձնեց Ալունս Մարտինսին, պատգամաւորներ ժողովի նախագահին: Մարտինսն ընդունեց այդ առաջարկութիւնը և կը կազմի հաշտութեան մինխարութիւն:

ՍՕՅԻԱ, 6 յունվարի Սօֆիայի քաղաքացիները ուղերթից Լոնդոն, իր ստորագրութեամբ հաստատելու քաղաքային տան միլիոն փոխառութեան օրկղացիները: Զինուորական յանձնաժողովի անդամները, որոնք պէտք է հսկեն Մանլի-խերի սխտանով հրացաններ պատրաստելու գործի վրա, այսօր ուղերթելու են Շտեյեր:

ՊԵՏԵՐՈՎԻԿ, 8 յունվարի Երէկ փակվեց բնագէտների ունիթորդ համագումար ժողովը:

ՄՕՍԿՎԱ, 8 յունվարի Այսօր կորսակոյնների Ռիմսկո-կորսակոյնների և Կոնչուկով-կորսակոյնների ազնական տոնի անդամները տօնում են զահին ծառայելու իրանց 500-ամեակը, գումար վելով և հիմնելով առնական դրամագումար ազքատ ազգականներին պահպանելու նպատակով:

ԱՔԷՆԻՔ, 8 յունվարի Ստորին դատարանների անդամների օրինակին հետևելով, բարձրագոյն դատարանի անդամներն էլ հրաժարական տուն:

ՏՈՒՐԻՆ, 8 յունվարի Երէկ, 7 ժամին Երեկոյան, վարձանվից Առտան զօրքը Բաղաբը սղաւորվեց:

Ս. ՊԵՏԵՐՈՎԻԿԻ ԲՈՐՍԱ

Table with 3 columns: Item description, Quantity, Price. Includes items like 1-ին շրջանի 10 ֆունտ արծե, 2-րդ շրջանի 100 մարկ, etc.

Անհրաժեշտ եմ համարում հրատարակով յայտնել ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԱՆԿԻՊԱՍՊԵՆՆ ԵՐԿԻՐ ՊՕՏԻՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ մեր կոմիտեական գործն, որ սկսված է 1883 թից շարունակվում է Գարձեալ սովորականի համեմատ ընդունում եմ յանձնարարական պայմանով, ապրանքներ ստանալու ու ճամփելու հետեալ քաղաքներն. ՈՒՋՈՒՆ—ԱԴՍՅ, ՂԱՂԱՐՎԱՆ, ԱՍԽԱԲԱԹ, ՄԵՐՎ, ՉԱՐՅՈՒ, ԱՍՈՒՐԿԱՐԻՍՅ, ԲՈՒԽԱՐԱ և ԱՍՄԱՐՂԱՆՈ, որտեղ և ունեմ կանտորներ, նոյնպէս և ԲԱԳՈՒ: Ես և կատարում եմ ապրանքներ դնելու, ծախելու և ուղարկելու պատվերներ: Զանկացողներն պայմանների մասին կարող են դիմել ինձ այս հասցեով. ՎՅՄԻԿ-ԱԴԱ—ԱԼԵԿՍԱՆԴՐ ՈՒՍԱՐՈՎ:

ԲԺԻՇԿ ՊՐԷՕԲՐԱԺԷՆՍԱԿԻ

Մասնագրագէտ բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադեական և զարվանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամաւորութիւնից, ռէվմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կօնրակաւորայից (մկանունների անդամաւորութիւն), բժշկում է կուրերին և խուլերին անդամաւորութիւնից և նոյնպէս ընդունում է կանայի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին: Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պոպովի Միքայէլեան փողոցի անկիւն Ք 9 և Ելիսաւետինական Ք 2, Խաչատուրյան փողոցի մօտ, վարձարկան կանաւորած սենեակների դիմաց: Դոմ Բոբով, անկ Միխայլովսկոյ ալ. Ք 9 և Ելիսաւետինսկոյ Ք 2, օրոկ Իտեդանտստա, փրոտիււ Վորոնցովսկ. ոմերով:

„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“

на 1890 одъ. Газета не измѣняя своего направления, и въ будущемъ году будетъ издаваться ежедневно, исключая постабраздничныхъ дней. Главнымъ образомъ, какъ и въ предидущіе годы, мы направимъ все свои усилія къ развитію «Мѣстнаго отдѣла», давая въ немъ возможно полныя свѣдѣнія о мѣстной жизни, о мѣстныхъ злобахъ дня и вообще о выдающихся событіяхъ и проявляющихся общественной жизни. Ежедневно мы будемъ помѣщать по одному ФЕЛЬЕТОНУ, посвященному выдающимся событіямъ русской и иностранной жизни. Постоянными сотрудниками, какъ и въ настоящемъ году, будутъ: Зоиля и Давидъ Сослани (Д. И. Кезели) и И. Г. Хахатуровъ. Въ годовые подписчики «Тифлискаго Листка», подписавшіеся до 1-го января, получатъ бесплатно «Армянскій Календарь» (на русскомъ языкѣ), съ предказаніями, на 1890-й годъ. Эта извѣстно изданная карманная книжка на этотъ разъ, сверхъ общихъ календарныхъ свѣдѣній, будетъ заключать въ себя еще: 1) предсказаніе О ПОГОДѢ Армянскаго Эфемерди, 2) предсказаніе на каждый лунный день, 3) наставленія Эфемерди на каждый мѣсяць отдѣльно, 4) образцы народныхъ сказаній 5) гастрономическій календарь тифлискаго мокалака. Въ частную продажу «Армянскій Календарь» НЕ ПОСТУПИТЬ. Городскимъ подписчикамъ календарь будетъ доставленъ 1-го января на домъ, а иногороднымъ почтой.

Table with 2 columns: Subscription rates for Tiflis and other cities. Includes 'Съ доставкой въ Тифлисъ' and 'Съ пересылкой для иногороднихъ'.

ПОДПИСКА и ОБЪЯВЛЕНІЯ принимаются: въ Конторѣ Редакціи «Тифлискаго Листка» въ г. Тифлисъ, и въ Москвѣ, въ конторѣ объявленій В. А. Гиляровскаго, Столешниковъ пер., д. Карзинкина. Подписка принимается только на вышеуказанные сроки съ 1-го числа каждаго мѣсяца.

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՄԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԸԲԵԱՆՑԻ

ԳՏԵՎՈՒՄ Է ՍՈՒՈՒԿ, ԳՆՆՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՇԱՀՆԱԶԱՐՈՎԻ ԶՈՒՎԱՐԻ 1-ից ՍԿԱՍԾ ԸՆԿՈՒՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏԵՐ ՊԱՏԱՍՏԵԼՈՒ ԳԻՄՆԱՂԻՄԻ, ԲԷՄԻՂԻՄԻ և ուրիշ անհայտ և հայտնի կորպուսի և ներսիսեան ուսումնարանի համար: Ուսուցիչներն են: բացի զանազան զինագիտական առարկաներից, աւանդվում են այլ ևս հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն և լատիներէն լեզուներ: Զանկացողները կարող են ԴԱՇՆԱԿԻ (բոյալ) վրա ածել սովորել, զրա համար պանսիօնում կայ առանձին մասնագէտ ուսուցիչ: Ուսուցիչներն են: ԵՐԹԵԻԿՆԵՐԻ, ԿԻՍԱՌՈՇԱԿԱՒՈՐՆԵՐԻ և ԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐԻ: Հասցէն. Կաթնի, Գանոսեան սուրբ, Մախնազարա. 2-5

Անհրաժեշտ եմ համարում հրատարակել յայտնել ի զիտութիւն մեր ԿՈՎԿԱՍԻ պատուելի ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ, որ ես վերջին ժամանակներս ՄՕՍԿՎԱՅԻՑ տեղի-փոխել եմ ՎԱՐՇԱՎԱ, և զարձեալ ընդունում եմ ամեն տեսակ յանձնարարութիւններ, մասնագրագէտ ԿԱՇՈՒԿՈՐԾ Լինելով, առնում եմ և ուղարկում եմ մեր յարգելի վաճառականներին, ամեն տեսակ ԿԱՇՈՒԿԸՆ և զրա վերաբերեալ ապրանքներ: Ծանօթ եմ նոյնպէս զայնտերիական և ուրիշ ապրանքների հետ: Իմ հասցէն. ՎԱՐՇԱՎԱ, Կոմարսկայա փողոց, տուն Ք 3. 2-20 (Ե. Չ.)

ԵՐԿՈՒՆԵԱԼ ՀԱՌԱՏԱՐՄԱՏԱՐ ՄԻՏՐՕՅԱՆ ԱՆԿԻՔԵՎԻՉ ՍԻԼԻՏՐԵՆՆԻԿՈՎ Ընդունում է առաւօտները 9-11 ժամը, երեկոյեան՝ 6-8 ժամը, Հասցէն. Սոյուակ, Ֆրէյլինսկայա փողոց, տուն Ք 6. 2-5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԻՆԵԱՆԻ (Կուկիա, վարձարկան արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր ԱՌԱԿՈՏԵՐԻՆ ԲՈՒԿՈՎՍԿԻ 10-11 ժ. ներքին, երեկոյեան և կանանց ց. ԿԻՆԻՔԻՆ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ-11 1/2-12 ժ. կանանց և երեկոյեան ց. ԲԵՆԿԵՎՍԿԻ 11-12 ժ. անհայտ, կողորդի, թիլի ց. և սիֆիլիսի (վերաբում և առամացաւ) ԱՐՏԵՄԻԵՎ-12-1 ժ. երեկոյեան, ուրախ և կիւրակի կանանց ց. ԿՈՐԱՊԵՏԵՆՑ-12-1 ժ. ներքին և երեկոյեան ց. բացի կիւրակի: ԵՐԵՎԱՆԵՐԻՆ ԳԱՌՈՄՍԿԻ-5 1/2-7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի. ՓՈՒԿԵՆԵԱՆ-5 1/2-6 1/2 ժ. ներքին, երեկոյեան և զրային ց. (էլէկտրոտերապիա): ԲԵՆԿԵՎՍԿԻ-7-8 ժամ. Հիւանդանոցում են մանկաբարձ ուսուցիչ, երկանցի և Արտադեան: ճար-50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ: Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ԲՈՒԿՈՎՍԿԻ

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

(Միքայէլեան փողոցի վրա, Թիֆլիսում) Տրվում են հայերէն գրքեր: Ամսական վճարը 20 կոպէկ է: Սկզբնական դարձողների աշակերտները և աշակերտահիւնները վճարում են 10 կոպէկ: Գրադարանը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2, և երեկոյեան 5 ժամից մինչև 8 ժամ: 2-5

ОТКРЫТА ПОДПИСКА

На ежедневную литературно-политическую газету „ИВЕРІЯ“ (четырнадцатый Годъ изданія)

Table with 3 columns: Subscription rates for Iveria newspaper. Includes 'Подписная цѣна газеты съ доставкой и пересылкой:' and 'на 12 мѣсяцевъ'.

Въ 1890 году газета «ИВЕРІЯ» будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ ежедневно, кромѣ дней, непосредственно слѣдующихъ за воскресными и праздничными днями. За границу на годъ 17 руб., на полгода 9 руб. 50 коп. За перемѣну адресовъ уплачивается: иногороднаго на иногородный—40 коп., городского на иногородный—1 руб. Подписка принимается исключительно не иначе какъ съ перваго числа каждаго мѣсяца. Подписка и объявленія принимаются въ Тифлисъ, въ помѣщеніи редакціи на Николаевской улицѣ, въ домѣ бывш. кн. Грузинскаго, № 21 и въ канцеляріи «Общества распространенія грамотности среди грузинъ.» Иногородные обращаются съ требованіями: Тифлисъ. Въ редакцію газеты «ИВЕРІЯ» Редакторъ-издатель князь Ілья Чавчавадзе. 3-3